

ԱՐԵՒՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԼՐԱՅՈՒՔ

Երկուշաբթի, 3 Մարտի, 2008

Հ.Յ.Դ. Գլենդելի «Ահարոնեան» կոմիտեության ընկերային յանձնախմբի կազմակերպութեամբ, Շաբաթ, Փետրուարի 16-ի երեկոյեան, Գլենդելի Աք. Աստուածածին եկեղեցւոյ «Արմենակ Տէր Պետրոսեան» սրահում տեղի է ունեցել Փետրուարեան համաժողովրդական ապստամբութեան 87-րդ նուիրուած ընկերային խրախճանք-տօնակատարութիւն: Միջոցառմանը ելոյթ է ունեցել Արմէն Տօնոյեանը, ներկայացնելով ապստամբութեան պատմականն ու խորհուրդը: Խրախճանքը շարունակուել է մեծ ջերմութեամբ, հայրենասիրական-ժողովրդական երգ ու պարով:



Հ.Յ.Դ. Օրէնջ Քաունթիի «Արմէն Գարօ» կոմիտեության ընկերային յանձնախմբի կազմակերպութեամբ եւս, Փետրուարի 16-ին Օրէնջ Քաունթիի Հայ կենտրոնում ոգեկոչուել է Փետրուարեան համաժողովրդական ապստամբութեան 87-րդ տարեդարձը: Չեռնարկին մասնակցած շուրջ 120 ներկաները առիթ են ունեցել լսելու եւ ապա անձնապէս հանդիպելու այցելութեամբ գաղութում գտնուող Բերիոյ թեմի նախկին առաջնորդ Սուրէն արք. Գաթարոյեանին, որը խօսելով պատմական իրադարձութիւնների մասին, անդրադարձել է ազատութեան տենչը հայութեան մէջ եւ վերջին հարիւրամեակում ծնունդ տուած Հ.Յ.Դաշնակցութեան անցած ուղուն, որը,- ասել է նա,- իր կեցուածքով, համոզումով եւ գաղափարաբանութեամբ մեր հայրենիքի ազատութեան եւ անկախութեան ճանապարհին զոհաբերեց իր նուիրեալ զաւակներին: Միջոցառմանը ելոյթ է ունեցել նաեւ Յովան Թաշճեանը, որը անհրաժեշտ է համարել մեր հերոսների յիշատակով ապրող ու նրանց ուղին շարունակող ժողովուրդ ունենալը: Նա շեշտել է, որ հայ ժողովրդի ձգտումներին հարազատ մարտիկն է Դաշնակցութիւնը: Հանդիսութիւնը շարունակուել է ազգային-յեղափոխական երգերի մեկնաբան Գառնիկ Սարգիսեանի երգերով:



Հայ Օգնութեան Միութեան Շրջանային վարչութեան եւ Շաբաթօրեայ դպրոցների յանձնախմբի հանատեղ ջանքերով Փետրուարի 2-ին «Կարապետեան» սրահում տեղի է ունեցել գրական-երաժշտական հանդէս, որին իրենց մասնակցութիւնն են բերել ՀՕՍ-ի շաբաթօրեայ դպրոցների աշակերտ-ուսիները, ներկայացնելով դրուագներ հայոց պատմութեան եւ մշակոյթի փառաւոր անցեալից: Միջոցառման ակարտին ելոյթ է ունեցել ՀՕՍ-ի Շրջանային վարչութեան ներկայացուցիչ եւ Շաբաթօրեայ դպրոցների յանձնախմբի պատասխանատու Սօնա Բոստանեանը, որը մեծապէս գնահատել է դրուատել է շաբաթօրեայ աշակերտութեան ցուցաբերած հետաքրքրութիւնը հայ ժողովրդի պատմութեան ու մշակոյթային արժէքների գնահատման ու պահպանման ուղղութեամբ :



ՀՀՂ Արեւմտեան Ամերիկայի Հայ Դատի Յանձնախմբի համայնքային յարաբերութիւնների հարցերով պատասխանատու Հայկ Յովսէփեանը երեքշաբթի, Փետրուարի 26-ին հանդիպում է ունեցել Էնսինոյի Ֆերահեան վարժարանի 11-րդ եւ 12-րդ դասարանների աշակերտների հետ: Հանդիպումը մաս էր կազմում Հայ Դատի Յանձնախմբի նախաձեռնած նոր ծրագրի, որի նպատակն է կապ պահել եւ շփուել համայնքի տարբեր խաւերի հետ, նրանց իրազեկ դարձնելով այն ծրագրերի ու աշխատանքների մասին, որոնք իրագործում է Հայ Դատի Յանձնախմբը եւ քաջալերել ու խրախուսել նրանց, որ աշխուժօրէն մասնակցեն եւ զօրակցեն տոյն միջոցառումներին: «Հանդիպումը չափազանց հետաքրքիր ու դաստիարակչական բնոյթ ունէր», - ասել է Ֆերահեան վարժարանի 12-րդ դասարանի աշակերտուհի Նարինէ Մելքոնեանն ու աւելացրել, որ ինքն ու իր ընկերները առիթ ունեցան լայն տեղեկութիւններ ստանալ Հայ Դատի Յանձնախմբի ընթացիկ աշխատանքների ու ամերիկահայութեանը յուզող հարցերի մասին: Ինչպէս նշել է Հայկ Յովսէփեանը խիստ

կարելոր է, որ ամերիկահայ միջնակարգ դպրոցների աշակերտութիւնը իրագել լինի մեր համայնքում տեղի ունեցող իրադարձութիւնների մասին եւ իր մասնակցութիւն բերի համայնքային աշխատանքներին:



Անգլերէն սկզբնատառերով CASPS կոչուող Կալիֆորնիայի պետական դպրոցների հայ աշակերտների յանձնախումբը Շաբաթ, Փետրուարի 16-ին, Գլենդէլի պետական չորս միջնակարգ դպրոցների բարձր միջինով աւարտած հայ աշակերտներին հրաւիրել էր Ազգային առաջնորդարան, յիշեցնելու, որ իրենք են այս գաղութի ապագայ ղեկավարները ինչպէս նաեւ նրանց համար ստեղծելու առիթ՝ լսելու ղեկավար հանգամանքում գտնուող մի շարք անհատների: Դասընթացին ներկայ էին 12-րդ դասարանի 96 աշակերտներ, որոնք կարողացել էին նուաճել 3.5-ից բարձր ընդհանուր միջին՝ ուսումնական բոլոր առարկաներում: Միջոցառմանը հանգամանօրէն քննարկուել են ղեկավարի դերի կարեւորութիւնն ու առանձնայատկութիւնը եւ յանձնախմբի անդամները յոյս են յայտնել, որ ամերիկահայ յիշեալ աշակերտները կը կարողանան դառնալ լաւ ղեկավարներ, վերականգնելով մեր իրաւունքները:

Այս լուրերը տրամադրուած են
ՀՅԴ Արեւմտեան Ամերիկայի
Կեդրոնական Կոմիտէի
Հանրային Կապի Գրասենեակի կողմից
ARF Central Committee
Office of Public Relations
Contact Person: Saro Nazarian
PublicRelations.ARF@hotmail.com
Tel: (818) 243-7059
Fax: (818) 243-1467

Այս լուրերը տրամադրելի են նաեւ Internet-ով եւ Fax-ով:
Լուրերը կարելի է վերահրատարակել: